«այլ եւս յայտնի է որ Ստեփանոս Սալմաստեցի 1552-ի սկիզբները մեռած է»[70]։ Պետրովիչի իրար ժխտող այս կարծիքներից ո՞րն է, որ «կը համապատասխանէ պատմական ճշմարտութեան»։ Այսքանը՝ Սալմաստեցու մահուան թուականի կապակցութեամբ։

Ինչ վերաբերում է Գրիգոր Վարագեցու ընտրութեան թուականի հարցին՝ Պետրովիչը, չարունակելով համարել, թէ Յովհաննիսուկի առաջին յիշատակարանում գտնուող 1551 թուականը Սալմաստեցու մահուան տարին է ցոյց տալիս եւ դա համապատասխանում է, ըստ Պետրովիչի, Լուովի տապանաքարի վրայ երեւացող տարեթուին, աշխատում է միւս երկու յիշատակարանները ժամանակագրօրէն հաշուեցնել առաջինի հետ՝ ենթադրաբար առաջ քաշելով այն միտքը, թէ Սալմաստեցին 1551 թ. մահանալուց առաջ թեմի առաջնորդ է դրել իր աշակերտին, որի պաշտօնի իրաւական հաստատումն է, որ տեղի է ունեցել 1555 թուականին։ Պետրովիչի այս ենթադրութիւնն ընդդրկում է, ուրեմն, 1551–1555 թթ. շրջանը, որի մասին նա գրում է. «Գրիգոր Վարագեցիի Լէոպոլսոյ աթոռին բարձրացումը, կ'երեւի թէ Լեհաստանի հայոց միաձայնութեամբ եղած չէ. որովհետեւ միայն մէկ մասը (այն է Լէոպոլսոյ Մեծերու խումբը) որոշում առաւ Սիկիզմոնդ Բ. Օգոստոս թագաւորին ներկայացնել խնդրանքը, նորընտիր եպիսկոպոսին հաստատումին համար. եւ ինչ որ աւելի նշանակալից է, այս ալ միայն 1551-ի սկիզբները»[71], կամ թէ՝ «նորընտիր առաջնորդը, Գրիգոր, ինչպէս տեսանք, Լեհաստանի Հայոց մէջ ծագած տարաձայնութիւններու հետեւանքով, իր պաշտօնին մէջ կրցաւ հաստատուիլ, Սիկիզմոնտ թագաւորին հրամանով, միայն 1555-ի մարտի 21-ին. հետեւաբար Յովհաննիսուկ իր երկրորդ յիշատակարանին մէջ արձանագրած է այն իրողութիւնը, թէ Գրիգոր Վարագեցին Լեհաստանի հայոց (Լուովի եւ Կամենիցի) արքեպիսկոպոս եղած է (իրաւապէս) 1555-ի ապրիլի 14-ին»[72]։ Սակայն Պետրովիչի այս տողերի մէջ մենք չենք գտնում որեւէ հաստատող փաստ այն մասին, թէ Վարագեցին 1551 թուականի՛ն էր ընտրուել եւ նրա հաստատումը ձգձգուել էր մինչեւ 1555 թուականը, ինչպէս եւ չենք գտնում որեւէ աղբիւր կամ ապացոյց այն մասին, թէ լեհահայերի մէջ Վարագեցու շուրջ եղել են տարաձայնութիւններ, որոնք եւ պատճառ են հանդիսացել ձգձգումների։ Վարագեցու շուրջ եւ նրա ու գաղութի երեւելիների միջեւ ճիշտ է, որ եղել են տարաձայնութիւններ եկեղեցական ունեցուածքի մատակարարման եւ վարչական իրաւասութիւնների հարցերով, բայց դա պատկանում է աւելի ուշ ժամանակաշրջանի՝ ոչ վաղ քան 1557 եւ հետագայ թուականներին[73], եւ շատ արհեստական է ընդհանրացման կարգով այդ փաստերը տարածելի համարել նաեւ աւելի հին՝ 1551–1555 թթ. շրջանի վրայ։ Հայկական եւ լեհական ոչ մի աղբիւր եւ ուսումնասիրութիւն համաձայն չէ Պետրովիչի կարծիքի հետ՝ Վարագեցու ընտրութիւնը յետ տանելու մինչեւ 1551 թուականը։ Այդ մասին բաւական է կարդալ հէնց Պետրովիչի հետեւեալ տողերը[74].

«Այս առաջնորդի դէմքը մինչեւ այժմ մասամբ միայն յայտնի էր հայ եւ լեհ պատմաբաններին։ Այդպիսի բացի պատճառը էր, եւ է տակաւին, միշտ նոյնը, այն է՝ պատմական համապատասխան աղբիւրների նուազութիւնը։ Հետեւաբար զարմանալի չէ, եթէ այդ պատմաբանները ամենից առաջ միաձայն չեն Գրիգոր Գ-ի ընտրութեան տարեթուի հարցում[75]։ Բարոնչը, ստուգիւ, իր առաջին աշխատութեան մէջ թեմական ընտրութիւնը թուագրել էր 1557[76]. երկրորդ երկասիրութեան մէջ, ընդհակա-

---

70 Անդ, էջ 108։

71 Անդ, էջ 41։

72 Անդ, էջ 77։

73 Ստ. Ռոշքա, էջ 164–165։ Ընդարձակ եւ այլ փաստերով տես նաեւ PChA p. 108 e seg։

74 PChA p. 103.

75 Հ. Ղ. Ալիշան, «Կամենից», Վենետիկ, 1896, էջ 135 – 136։ K. Niesiecki, «Herbarz polski», t. I, s. 108:

76 S. Baracz, «Żywoty slavnych Ormian w Polsce», Lwo'w, 1856, s. 136.